

որք այդպէս վարուողը բախտաւոր և երջանիկ չի կոչում, այլ  
խարերայ և խարդախ. և այդպիսի մի վարուողութեան համար  
շատ հեշտութեամբ կարող է մեղապարտների նստարանի վրայ  
նստել: Մեր մատաղ սերունդը այդ գրքից պիտի սովորի, թէ  
հանոյելը, հօր չար լինելը, հիւանդութիւնը օգտակար բաներ  
են, որովհետեւ տանելով այդ բոլորը, մենք համբերութեան ենք  
վարժուում (44 երես): Մի ուրիշ տեղ (53 եր.) խորհուրդ է  
տալիս, որ մի ամբողջ դասախոսութիւն կարդաս մօտդ եկած  
հիւանդների և անստէր աղքատների գլխին թէ, «բարիք փնդը-  
ռել հարկաւոր է ոչ թէ իրենից դուրս, այլ հչնց իրեն մէջ»:  
Մի այլ տեղ (56 երես) «մեզանից իւրաքանչիւրի բարիքն իր  
խելացի ապրելու մեջն է—իսկ չարիքն ընդհակառակը... եթէ  
այս մենք շատ լաւ հասկանանք, այն ժամանակ ոչ ոքի հետ  
երբէք ոչ կը վիճենք և ոչ էլ կը թշնամանանք»: Մի անմիտ  
խրատ էլ բերենք և վերջ տանք (102—103 երես). «... ցան-  
կանում է նա (Աստուած), որ ես գողացնեմ, ես ևս ցանկա-  
կանում եմ այդ. կամենում է նա, որ գործեմ, անեմ այս և ոչ  
թէ այն, ես էլ նոյնն եմ ցանկանում. կամենում է նա, որ ինձ  
հետ (հայերէն ասում են ինձ պատահի և ոչ թէ ինձ հետ) մի  
որկիցէ բան պատահի, ես էլ նոյնն եմ ուզում»...

Այսպիսի գրքերի թարգմանեն ու հրատարակելը թէ որ  
բոլորովին աւելնորդ չէ, այն ժամանակ գոնէ շոայլութիւն է,  
որոնետեւ դեռ շատ հարկաւոր և օգտակար բաներ կան, որ  
չ'ունենք: Թարգմանութեան լեզուն լաւ է, թէկ տեղ-տեղ ուռ-  
սական ոճի ազդեցութիւն երևում է: Կրճատումները տեղ-տեղ  
արուած է այսպէս, որ կապը չէ պահպանուած: Դինը 40 կոպ.  
է, որ չ'արժէ:

Ա. Վ. Դ.

---

Յակոբ Կարնեցի՝ «Տեղագիր Վերին Հայոց», Կ. Կուտանեանց, 1903 թ.  
Վաղարշապատ.

---

«Տեղագիր Վերին Հայոց» գրքով տասնեօթերորդ դարու  
մի յիշատակարան է, ուր հեղինակ Տէր Յակոբ Կարնեցին տե-  
ղագրել է Արքումի կուսակալութեան—իր ժամանակի—23  
գաւառները: Տեղագրութեան մասին այն հասկացողութիւնը  
որ այժմ մենք ունենք, անծանօթ է Կարնեցուն: Համառօտակի  
նկարագրելով ամեն մի գաւառ շատ քիչ դէպքում է գաւառնե-  
րի բերքերը միասմի յիշում. արդինաբերութեան մասին  
նրա տուած տեղեկութիւնները շատ սեղմ են. իսկ ազգաբնա-

կութեան թիւ ամեննին չի տալիս համարեա թէ, իբր քահանայ՝ չի մոռանում վասքերն ու եկեղեցիները ու սրբոց մասնանքները: Զընայելով այդպիսի սեղմ, համառօտ տեղեկութիւններին երկրի արդիմարերութեանց մասին, այնուամենայնիւ երկրի տնտեսական վիճակի մասին որոշ գաղափար է տալիս: Խօսելով առանձին էրզրումի մասին խառնում է և ժամանակակից դէպքերը և երկրի դրութիւնը, հալածանքները: Կարսեցուց իմանում ենք, որ իր ժամանակին որևէ կոսակալութիւն մի փաշայի էր տրուում կառավարելու անսահման իրաւունքներով, իբր սեփականութիւն: Ինքը կարսեցին «կը» և «կերուածք» բառերով ամենից լաւ է բնորդում փաշայի իրաւունքներն ու երկրի քաղաքական վիճակը, որ ներկայ դրութիւնից շատ էլ տարբեր չէ:

Գիրքը լուսաբանուած է ծանօթութիւններով, որ կցուած է վերջին: Կայ յատուկ անուանց ցանկ: Գրքի դինը չէ նշանակուած վրէն: Հրատարակութիւնը եղել է խնամքով և մաքուր:

Ա. Վ. Դ.

\* \* \*) Դը-Մովասսանի «Գեղեցկունու խորավաճութիւնը եւ հանգուեալի գաղտնիքը» թարգմ. ու. Երուանդ Տէր-Յովհաննիսեանցի. 1903 թ. Բազու. գինն է 10 կոպէկ:

Գիրքը Մովասսան՝ Գիւստավ Ֆլորերի աշակերտը՝ իրապաշտ (réaliste) դպրոցի ցայտուն դէմքերէն մէկն է: Ֆլորերի, Ալֆոնս Ռոդէի, Գոնկուո և լրայրներուն հետ Մովասսանը՝ իրապաշտ դպրոցի գլխաւոր ներկայացուցիչներէն մէկը եղաւ: Մովասսանը՝ իր գրչի տաղանդաւոր ընկերներէն այն բանով կը տարբերէ՞ որ իր ոճը՝ ոչ Ֆլորերի գեղեցութիւնը, ոչ Ռոդէի նուրբ հեգութիւնը, և ոչ Գոնկուո և լրայրներէն չարչըկուած՝ տպաւորական (impressionniste) նկարագիրն ունի: Մովասսանը ժուժեկալ, ուժեղ, գրեթէ դասական լեզուով մը իրապաշտ պատմուածքներ գրած է, ուր ապշեցուցիչ ճշտութեամբ մը կը նկարագրէ գեղջուկներու, մանաւանդ նորմանդիացի գեղջուկներու բարքերը, պղտիկ բուրժուաներու և գործակատարներու (employé) նիստ ու կացը, անոնց ապրելու, զգալու, խորհելու եղանակները: Մովասսանը բացի պատմուածքներէ ունի մէկ

\* \*) Guy de Maupassant պէտք է կարդալ Գիրքալ Գիրքը Մովասսան և ոչ թէ Գիրքը Փրանսերէնի մէջ ց տառի մօտ դրուող և տառը չի հնչուիր: